

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՑԱՆՑԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՌԵԺԻՍՏՐԱՅԻՆ (ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2014 թվականի N 43-Ա

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՑԱՆՑԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ
ՌԵԺԻՍՏՐԱՅԻՆ (ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն
հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետի՝

1. Ստեղծել՝

1) համընդհանուր լաբորատոր ցանցը համակարգող մասնագիտական խորհուրդ և հաստատել
դրա անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ռեժիմային «կենսաանվտանգության» հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝
համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ մեկամսյա ժամկետում
հաստատել համընդհանուր լաբորատոր ցանցը համակարգող մասնագիտական խորհրդի և
ռեժիմային (կենսաանվտանգության) հանձնաժողովի աշխատակարգերը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Մարգարյան

2014 թ. հունվարի 31
Երևան

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ձ Մ

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՑԱՆՑԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

- Ա. Վանյան - ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ)
- Լ. Ավետիսյան - ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատող (համաձայնությամբ)
- Ա. Ավետիսյան - ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի աշխատակազմի ճառագայթային անվտանգության վարչության ճառագայթային անվտանգության բաժնի պետ
- Ա. Շիրվանյան - ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության վարչության պետ
- Վ. Բազիյան - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության ճառագայթային, քիմիական, կենսաբանական իրավիճակի մոնիթորինգի բաժնի պետ, փրկարար ծառայության գնդապետ
- Լ. Մարգարյան - ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ (համաձայնությամբ)
- Հ. Պողոսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության լաբորատոր փորձարկումների կենտրոնի ղեկավար (համաձայնությամբ)
- Ս. Պետրոսյան - «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության քիմիայի ամբիոնի ասիստենտ (համաձայնությամբ)
- Ա. Գևորգյան - ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար (համաձայնությամբ)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի**

Վ. Գաբրիելյան

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ձ Մ

ՌԵԺԻՄԱՑԻՆ «ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Գ. Մելիք-Անդրեասյան - ՀՀ առողջապահության նախարարության «Արտո Բոգդանի Ալեքսանյանի անվան համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական մակաբուժաբանության գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն (համաձայնությամբ)
- Շ. Սարգսյան - ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վիրուսաբանության լաբորատորիայի վարիչ (համաձայնությամբ)
- Ե. Գոնդակյան - ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
- Բ. Խաչատրյան - ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային կառույցների և լաբորատոր զարգացման գծով տնօրենի երկրորդ տեղակալ (համաձայնությամբ)
- Ա. Մովսեսյան - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության ճառագայթային, քիմիական, կենսաբանական իրավիճակի մոնիթորինգի բաժնի ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության փոխգնդապետ (համաձայնությամբ)
- Գ. Շահբազյան - ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կենտրոնական լաբորատորիայի վարիչ (համաձայնությամբ)
- Վ. Խաչատրյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության լաբորատոր փորձարկումների կենտրոնի առաջատար մասնագետ (համաձայնությամբ)

Ս. Քոչարյան - «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտության և
տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության
պետ (համաձայնությամբ)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան